



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԾԱՏՈՒՐՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգաղ թիվ 37821/03)

ՎՃԻՌ

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

2012թ. հունվարի 10

*Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*





**Ծատուրյանն ընդդեմ Հայաստանի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ բաժանմունք) Պալատը, հետևյալ կազմով՝

Josep Casadevall, Նախագահ,

Corneliu Bîrsan,

Alvina Gyulumyan,

Egbert Myjer,

Ineta Ziemele,

Luis López Guerra,

Mihai Poalelungi, դատավորներ,

and Santiago Quesada, Բաժանմունքի քարտուղար,

2011թ. նոյեմբերի 29-ին կայացած դռնփակ նիստում, կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

**ԸՆԹԱՅԱԿԱՐԳԸ**

1. Վարույթը հարուցվել է 2003թ. նոյեմբերի 28-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի քաղաքացի պրն. Աշոտ Ծատուրյանի («դիմումատու») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 37821/03 գանգատի հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացնում էին փաստաբաններ՝ պրն. Զ.Մ. Բարնսը, Զորջթաուն (Կանադա), պրն. Ա. Քարբոնին, Պաթերսոն (ԱՄՆ) և պրն. Ռ. Խաչատրյանը, Երևան: ՀՀ կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն. Գ. Կոստանյանը:

3. 2005թ. սեպտեմբերի 6-ին Երրորդ Բաժանմունքի նախագահն որոշեց գանգատն ուղարկել Կառավարությանը:

4. 2011թ. հունիսի 23-ին Երրորդ Բաժանմունքի նախագահը Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն որոշեց իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն:

## ՓԱՍՏԵՐԸ

### I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1980թ. և ապրում է Երևան քաղաքում:

#### **Ա. Գործի նախապատմությունը**

6. Դիմումատուն հանդիսանում է «Եժովայի վկա» կրոնական կազմակերպության անդամ: 1997թ.-ից ի վեր նա հաճախել է այդ կազմակերպության տարբեր կրոնական ծառայություններ:

7. 1997թ. հունվարի 31-ին Շահումյանի զինվորական կոմիսարիատում դիմումատուն հաշվառվել է որպես զինապարտ: Դիմումատուն սովորում էր համալսարանում, որի պատճառով նրա զորակոչը հետաձգվել էր:

8. 2002թ. սեպտեմբերի 23-ին դիմումատուն ստանում է ծանուցում՝ զինվորական ծառայության անցնելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու պահանջով:

9. Նույն օրը դիմումատուն նամակ է ուղարկում Մալաթիա-Սեբաստիա համայնքի զինվորական կոմիսարիատ՝ հայտնելով, որ հրաժարվում է զինվորական ծառայությունից և պահանջում է, որ իր գործն ուղարկվի դատախազություն: Դիմումատուն նաև նամակ է ուղարկում ՀՀ գլխավոր դատախազին, որում նշում է, որ ինքը հրաժարվում է զինվորական ծառայությունից իր կրոնական համոզմունքների պատճառով, փոխարենը՝ պատրաստ է անցնել այլընտրանքային քաղաքացիական ծառայության:

10. 2002թ. հոկտեմբերի 2-ին Շահումյանի զինվորական կոմիսարը գրավոր տեղեկացնում է ոստիկանությանը դիմումատուի՝ իր կրոնական համոզմունքների պատճառով զինվորական ծառայությունից հրաժարվելու մասին, և խնդրում է վերջինիս բռնի ուժով բերել կոմիսարիատ:

11. 2002թ. հոկտեմբերի 17-ին դիմումատուն ոստիկանությունում հայտարարում է, որ հրաժարվում է անցնել զինվորական ծառայության իր կրոնական համոզմունքների պատճառով, փոխարենը՝ պատրաստ է անցնելու այլընտրանքային քաղաքացիական ծառայության:

12. 2002թ. նոյեմբերի 8-ի նամակով Երևանի Շենգավիթ համայնքի դատախազությունը տեղեկացնում է դիմումատուին, որ նա կենթարկվի քրեական պատասխանատվության, եթե հրաժարվի զինվորական ծառայությունից:

#### **Բ. Դիմումատուի դեմ հարուցված քրեական գործը**

13. 2003թ. մարտի 4-ին քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի ներքո քրեական գործ է հարուցվում՝ դիմումատուի կողմից ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու փաստի առթիվ:

14. 2003թ. մարտի 18-ին դիմումատուն հարցաքննվում է Երևանի Շենգավիթի համայնքի դատախազությունում: Նա մեկ անգամ ևս նշում է, որ կրոնական համոզմունքներից ելնելով հրաժարվում է ծառայել բանակում, բայց պատրաստ է իրականացնել այլընտրանքային քաղաքացիական ծառայության:

15. Նույն օրը Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանը դիմումատուին կալանավորելու որոշում է կայացնում:

16. 2003թ. ապրիլի 29-ին Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչում ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու մեջ և դատապարտում է նրան ազատազրկման երկու տարի ժամանակով:

17. Դիմումատուն ներկայացնում է վերաքննիչ բողոք:

18. 2003թ. հունիսի 24-ին Վերաքննիչ քրեական դատարանը անփոփոխ է թողնում Առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

19. 2003թ. հուլիսի 3-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացնում պնդելով, որ, ի թիվս այլոց, իր դատապարտումը խախտել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված իր իրավունքները:

20. 2003թ. հուլիսի 25-ին Վճռաբեկ դատարանն անփոփոխ է թողնում դիմումատուի դատապարտման վերաբերյալ դատավճիռը:

21. 2003թ. օգոստոսի 28-ին դիմումատուն նշանակված պատժից հինգ ամիս և տասն օր կրելուց հետո պայմանական վաղաժամկետ ազատ է արձակվում:

## II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

22. Ներպետական օրենսդրության համապատասխան համառոտ նկարագրի համար տե՛ս *Bayatyan v. Armenia* գործը (GC), գանգատ թիվ 23459/03, պարբ. 41-45, 7 հուլիս 2011թ.):

## ԻՐԱՎՈՒՆՔԸ

### I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

23. Դիմումատուն բողոքել է առ այն, որ զինվորական ծառայությունից հրաժարվելու համար իրեն դատապարտելը խախտել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածը, համաձայն որի.

«1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտվելու ազատություն:

2. Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը, ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների»:

## Ա. Ընդունելիությունը

### 1. Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառումը

24. Կառավարությունը պնդեց, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի, քանի որ նա պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու պահանջով չի դիմել Կառավարությանը, ինչպես պահանջվում է

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին (գ) կետով:

25. Դիմումատուն պնդեց, որ սպառել է իրավական պաշտպանության ներպետական բոլոր արդյունավետ միջոցները՝ իր դեմ կայացրած դատավճիռը բողոքարկելով Վերաքննիչ դատարան և Վճռաբեկ դատարան: Ամեն դեպքում «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին (գ) կետը չի կարող համարվել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց:

26. Դատարանը նշում է, որ Կառավարությունը նման փաստարկ ներկայացրել է նաև *Bayatyan v. Armenia* ((որոշում, թիվ 23459/03, 12 դեկտեմբերի 2006թ.) գործում, որը մերժվել էր: Հետևյալ գործով այլ եզրակացության հանգելու կարիք չկա:

27. Հետևաբար, այս առարկությունը պետք է մերժվի:

## 2. Եզրակացություն

28. Դատարանը գտնում է, որ այս գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ակնհայտորեն անհիմն չէ: Դատարանը, այնուհետև, նշում է, որ դա որևէ այլ հիմքով անընդունելի չէ: Հետևաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

## Բ. Գործի ըստ էության քննությունը

### 1. Արդյոք եղել է միջամտություն

29. Կառավարությունը պնդեց, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված դիմումատուի իրավունքներին որևէ միջամտություն չի եղել: Հոդված 9-ը կիրառելի չի եղել դիմումատուի գործում, քանի որ ինչպես մեկնաբանել է նախկին Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի կողմից, այն չի երաշխավորել համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը:

30. Դիմումատուն պնդեց, որ 9-րդ հոդվածը կիրառելի է իր գործում և տեղի է ունեցել միջամտություն՝ իր կրոնը դավանելու ազատության նկատմամբ:

31. Դատարանը նշում է, որ Մեծ Պալատը վերջերս լուծել է այս խնդիրը՝ դիտարկելով, որ զինվորական ծառայությունից

հրաժարումը, եթե այն առաջացել է բանական ծառայելու պարտականության և անձի խղճի կամ խորը և իսկական կրոնական կամ այլ համոզմունքների միջև լուրջ և ծանրակշիռ հակասության արդյունքում, իրենից ներկայացնում է համոզմունք կամ հավատք, որն ունի բավարար չափով հիմնավորվածություն, համոզականություն, լրջություն, միասնականություն և կարևորություն՝ 9-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների ներգրավման համար (տե՛ս վերը նշված *Bayatyan*, պարբ. 110): Այդ գործով Մեծ Պալատը եզրակացրել է, որ դիմումատուի դեպքում, ով նույնպես հանդիսացել է Եհովայի վկա կազմակերպության անդամ և կրոնական համոզմունքներից ելնելով հրաժարվել էր զինվորական ծառայությունից, 9-րդ հոդվածը կիրառելի էր, համարելով, որ դիմումատուի հակադրումը զինվորական ծառայությանը հետևանք էր վերջինիս կրոնական համոզմունքների, որոնք սահմանված են եղել ի սկզբանե և գտնվել են լուրջ ու աներկբա հակամարտության մեջ զինվորական ծառայության պարտականության հետ (տե՛ս նույն տեղում, պարբ. 111):

32. Դատարանը նշում է, որ սույն գործի հանգամանքները գործնականում նույնն են: Այդ իսկ պատճառով այն մերժում է Կառավարության փաստարկը և գտնում է, որ 9-րդ հոդվածը կիրառելի է դիմումատուի գործում:

33. Դատարանը եզրակացնում է, որ զորակոչին չներկայանալով դիմումատուն արտահայտել է իր կրոնական համոզմունքները: Նրա դատապարտումը զորակոչից խուսափելու համար հանդիսանում է 9-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կրոնի արտահայտման ազատության իրավունքին միջամտություն (տե՛ս, նույն տեղում, պարբ. 112): Նման միջամտությունը հակասում է 9-րդ հոդվածին, քանի որ այն «նախատեսված չի եղել օրենքով», չի հետապնդել մեկ կամ ավելի իրավաչափ նպատակներ, ինչպես դա պահանջում է հոդվածի 2-րդ մասը, և «անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում» (տե՛ս, ի թիվս այլոց, *Buscarini and Others v. San Marino* [GC], գանգատ թիվ 24645/94, պարբ. 34, ECHR 1999-I):



## 2. Արդյոք միջամտությունն արդարացված է

### (ա) Նախատեսված է օրենքով

34. Դիմումատուն նշեց, որ միջամտությունն օրենքով նախատեսված չի եղել, քանզի այն խախտել է ՀՀ Սահմանադրությունը, այն պարտավորությունները, որոնք Հայաստանի իշխանությունները ստանձնել են անդամակցելով Եվրոպայի Խորհրդին, ինչպես նաև Հայաստանի կողմից ստանձնած այլ միջազգային պարտավորություններ, որոնք բխում են «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային կոնվենցիայի 18-րդ հոդվածից:

35. Կառավարությունն այս դրույթի վերաբերյալ չներկայացրեց առարկություն:

36. Դատարանը, ելնելով սույն գործի նպատակներից և միջամտության անհրաժեշտության վերաբերյալ իր եզրահանգումներից (տե՛ս, պարբ. 44-45), նպատակահարմար է գտնում չքննարկել միջամտության՝ օրենքով նախատեսված լինելու հարցը (տե՛ս վերը նշված *Bayatyan*, պարբ. 116):

### (բ) Իրավաչափ նպատակ

37. Դիմումատուն նշեց, որ այդ միջամտությունը չի հետապնդել իրավաչափ նպատակ: 9-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը ազգային անվտանգության շահերի հետ կապված սահմանափակումներ չի թույլատրում, մինչդեռ դիմումատուի դատապարտման ընթացքում ներպետական դատարանների կողմից որևէ այլ նպատակ չի վկայակոչվել:

38. Կառավարությունն այս դրույթի վերաբերյալ առարկություն չի ներկայացրել:

39. Դատարանը անհրաժեշտ չի համարում որոշել թե արդյոք 9-րդ հոդվածի 2-րդ պարբերության միջամտությունը հետապնդել է իրավաչափ նպատակ, քանի որ այն ամեն դեպքում վերը նշված պատճառներով չէր համապատասխանում այդ դրույթներին (տե՛ս նույն տեղում, պարբ. 117):

### (գ) Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում

40. Դիմումատուն պնդեց, որ համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց նկատմամբ

քրեական պատժամիջոցների կիրառումը, նույնիսկ այն որոշ Անդամ Պետություններում, որտեղ դեռևս չի իրականացվել այլընտրանքայի քաղաքացիական ծառայություն, չի կարող համարվել անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում: Հայաստանյան իշխանությունները գիտակցում են, որ ստանձնել են պարտավորություն զերծ մնալ համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց ազատագրելուց նույնիսկ մինչև նման ծառայությունն ապահովող օրենք ընդունելը: Այնուհետև, իր հանդեպ կիրառված ազատագրում ամբողջովին անհամաչափ էր ժամանակակից ժողովրդավարական պետության համար:

41. Կառավարությունն այս դրույթի վերաբերյալ չներկայացրեց առարկություն:

42. Դատարանը կրկնում է, որ, ինչպես արտացոլված է 9-րդ հոդվածում, մտքի, խղճի և կրոնի ազատությունը հանդիսանում է Կոնվենցիայի իմաստով «ժողովրդավարական հասարակության» հիմքերից մեկը: Այս ազատությունն իր կրոնական էությանը հանդիսանում է հավատացյալների ինքնությունը և նրանց կողմից կյանքի իմաստավորումը հաստատելու կարևորագույն բաղկացուցիչ մասերից մեկը, սակայն այն նաև բավականին արժեքավոր է աթեիստների, ազնոստիկների, սկեպտիկների և կրոնի նկատմամբ անտարբեր մարդկանց համար: Բազմակարծությունը, որը ժողովրդավարական հասարակության անբաժանելի մասն է կազմում, և ձեռք է բերվել դարերի ընթացքում, կախված է դրանից: Այդ իրավունքը ներառում է, ի թիվս այլոց, կրոնական համոզմունքներ ունենալու կամ չունենալու կամ կրոնը դավանելու կամ չդավանելու ազատություն (տե՛ս *Kokkinakis v. Greece*, 25 մայիս 1993թ., պարբ. 31, Սերիա Ա թիվ 260-A; *Buscarini and Others*, վերը նշված, պարբ. 34; և *Leyla Şahin v. Turkey* [GC], գանգատ թիվ 44774/98, պարբ. 104, ECHR 2005-XI):

43. Մինչդեռ կրոնական ազատությունը հիմնականում անհատի գիտակցության հարցն է, այն, ի թիվս այլոց, ենթադրում է նաև անձի՝ կրոնը դավանելու ազատություն, ինչպես միանձնյա և հրապարակավ կամ մասնավոր կարգով, այնպես էլ այլոց հետ համատեղ: 9-րդ հոդվածը թվարկում է անձի կրոնի կամ հավատքի արտահայտման մի քանի տեսակ՝ պաշտամունք, քարոզչություն՝ արարողությունների և ծեսերի միջոցով (տե՛ս

*Hasan and Chaush v. Bulgaria* [GC], գանգատ թիվ 30985/96, պարբ. 60, ECHR 2000-XI, և *Metropolitan Church of Bessarabia and Others v. Moldova*, գանգատ թիվ 45701/99, պարբ. 114, ECHR 2001-XII):

44. Դատարանը նշում է, որ քննել է նմանատիպ գանգատ *Bayatyan v. Armenia* գործով և եզրակացրել է, որ դիմումատուի նկատմամբ պատժամիջոցի կիրառումը այն դեպքում, երբ իր կրոնի և համոզմունքի պահանջների որևէ բավարարում չի իրականացվել, չի կարող անհրաժեշտ համարվել ժողովրդավարական հասարակությունում (տե՛ս վերը նշված *Bayatyan*, պարբ. 124-125): Սույն գործում դիմումատուն նույնպես հանդիսանում էր «Եհովայի վկա» կրոնական կազմակերպության անդամ, և չէր ցանկանում անցնել զինվորական ծառայություն ոչ թե անձնական շահերից կամ հարմարավետությունից ելնելով, այլ հիմնվելով միայն իր կողմից անկեղծորեն դավանվող կրոնական համոզմունքների վրա, իսկ կիրառված քրեական պատժամիջոցները նման հնարավորության բացակայության հետևանքն էին:

45. Վերը նշված պատճառներից ելնելով, Դատարանը գտնում է, որ դիմումատուի դատապարտումը հանդիսացել է միջամտություն, որը, Կոնվենցիայի 9-րդ հոդվածի իմաստով, անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում: Համապատասխանաբար, տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

46. Դիմումատուն նույնպես ներկայացրել է գանգատներ՝ Կոնվենցիայի 9-րդ և 14-րդ հոդվածների ներքո:

47. Հաշվի առնելով իր մոտ առկա բոլոր նյութերը, և այնքանով, որքանով այս գանգատները գտնվում են իր իրավասության ներքո, Դատարանը գտնում է, որ չի բացահայտվել Կոնվենցիայում կամ դրան կից Արձանագրություններում ամրագրված իրավունքների և ազատությունների որևէ խախտում: Հետևաբար, համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, գանգատի սույն մասը պետք է մերժվի որպես ակնհայտորեն անհիմն:

### III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

#### 48. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

#### Ա. Վնաս

49. Դիմումատուն պահանջել է 10,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

50. Կառավարությունն այս պահանջի վերաբերյալ առարկություն չի ներկայացրել:

51. Դատարանը գտնում է, որ դիմումատուն անկասկած կրել է ոչ նյութական վնաս՝ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու արդյունքում դատապարտվելու և ազատազրկման ենթարկվելու համար: Ելնելով գործի փաստական հանգամանքներից և արդարացիության սկզբունքից, Դատարանը շնորհում է դիմումատուին 6,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

#### Բ. Դատական ծախսեր

52. Դիմումատուն պահանջել է ընդհանուր 12,250 եվրո որպես ներպետական դատարաններում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կրած ծախսերի դիմաց փոխհատուցում: Դիմումատուն ներկայացրել է մեկ ներպետական և երկու օտարերկրյա փաստաբանների ծախսերի նախահաշիվները, որոնցում նշված էին մինչև դատարանում գործի քննությունը ու տվյալ գործով դատարանում վերջնական որոշման կայացման պահը՝ յուրաքանչյուր փուլի դիմաց վճարման ենթակա միանվագ գումարները:

53. Կառավարությունն այս պահանջի վերաբերյալ առարկություն չի ներկայացրել:

54. Դատարանը կրկնում է, որ փոխհատուցման ենթակա են միայն ճանաչված խախտումների առնչությամբ ներկայացված դատական ծախսերը (տե՛ս *Beyeler v. Italy* [GC], գանգատ թիվ. 33202/96, պարբ. 27, ECHR 2000-I): Սույն գործում, դիմումատուի կողմից Դատարանին ներկայացրած գանգատը ներառում էր Կոնվենցիայի 9-րդ և 14-րդ հոդվածների ներքո բազմաթիվ այլ գանգատներ, որոնք հայտարարվել են անընդունելի: Հետևաբար, դիմումատուի պահանջը չի կարելի բավարարել ամբողջությամբ, այն պետք է համապատասխանաբար կրճատել: Առկա տեղեկությունների հիման վրա կատարելով իր հաշվարկները՝ Դատարանը որոշում է շնորհել դիմումատուին 4,000 եվրո որպես դատական ծախսերի փոխհատուցում:

#### **Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը**

55. Դատարանը նպատակահարմար է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոս:

### **ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ**

1. Հայտարարում է, ձայների մեծամասնությամբ, Կոնվենցիայի 9-րդ հոդվածի ներքո ընդունելի գանգատի այն մասը, որը վերաբերում է զինվորական ծառայությունից հրաժարվելու արդյունքում դիմումատուի դատապարտմանը, իսկ գանգատի մնացած մասը՝ անընդունելի:
2. Վճռում է, ձայների վեց կողմ և մեկ դեմ հարաբերակցությամբ, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում:
3. Վճռում է, ձայների վեց կողմ և մեկ դեմ հարաբերակցությամբ, որ՝

(ա) պատասխանող պետությունը, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դատավճռի վերջնական ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում, դիմումատուին պետք է վճարի հետևյալ գումարները՝ փոխարկված ՀՀ դրամի վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

(i) 6,000 (վեց հազար) եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, գումարած նշված գումարի վրա հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը,

(ii) 4,000 (չորս հազար) եվրո որպես դատական ծախսերի փոխհատուցում, գումարած նշված գումարի վրա հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը,

(բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի նշված գումարի պարզ տոկոս Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի չափով պարտավորությունների չկատարման ժամանակահատվածի համար՝ գումարած երեք տոկոսը:

4. Մերժում է, միաձայն, դիմումատուի արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերեն, և գրավոր ծանուցվել է 2012թ. հունվարի 10-ին, համաձայն Դատարանի Կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ մասերի:

Santiago Quesada  
Քարտուղար

Josep Casadevall  
Նախագահ

Համաձայն Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ մասի և Դատարանի Կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ մասի՝ Դատավոր Գյուլումյանի առանձին կարծիքը կից ներկայացվում է սույն վճռին:

J.C.M.  
S.Q.

## ԴԱՏԱՎՈՐ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆԻ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Սույն գանգատը ներկայացվել է *Bayatyan v. Armenia* (GC, գանգատ թիվ 23459/03, 7 հուլիսի 2011թ.) հետ միևնույն ժամանակ և Կոնվենցիայի 9-րդ հոդվածի ներքո բարձրացնում է միևնույն խնդիրները:

*Bayatyan*-ի գործով Մեծ Պալատը քվեարկել է վերը նշված հոդվածի խախտում ճանաչելուն կողմ, և սույն գործով Պալատի մեծամասնությունը ցուցաբերել է միևնույն մոտեցումը:

*Bayatyan*-ի գործով իմ կողմից մանրամասն ներկայացված չհամընկնող կարծիքում նշված պատճառներով ես քվեարկել եմ գանգատի ընդունելիությանն և ըստ էության քննության առնչությամբ մեծամասնության դեմ, և այսպիսով, ես նույնն արել սույն գործով:

## ԴԱՏԱՎՈՐ ԶԻՄԵԼԻ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

1. Այս գործում կրկնվում է Դատարանի կողմից *Bayatyan v. Armenia* ([GC], գանգատ թիվ 23459/03, պարբ. 41-45, 7 հուլիս 2011թ.) վճռում ամրագրված մոտեցումը: Գոյություն ունի երեք հիմնավորում կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց գործերով կրոնի ազատության իրավունքի խախտում ճանաչելու համար. առաջինը՝ անձի համոզմունքը կամ հավատքը, որն ունի բավարար չափով հիմնավորվածություն, համոզականություն, լրջություն, միասնականություն և կարևորություն՝ 9-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների ներգրավման համար (տե՛ս վերը նշված *Bayatyan*, պարբ. 110); երկրորդ՝ այն փաստը, որ Հայաստանում ենթադրյալ իրադարձությունները տեղի ունենալու ժամանակ, Եվրոպական պետությունների իրավական պրակտիկայում արդեն իսկ ճանաչվել էր կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը; և, երրորդ՝ Հայաստանի ստանձնած պարտավորությունը՝ այդ իրավունքի իրականացումը ներպետական մակարդակում ապահովելու նպատակով անհրաժեշտ օրենսդրություն ընդունելու համար:

2. *Bayatyan*-ի գործով վճիռը, որը հաջորդեց սույն գործով Պալատի կողմից ընդունված վճիռին, բարձրացնում է բավականին հետաքրքիր հիմնախնդիր, որը վերաբերում է տեղական սովորությանին նորմերի լույսի ներքո Կոնվենցիայի կիրառման հարցին այնպիսի պետության առնչությամբ, որին, քաղաքական ընթացակարգի համատեքստում, տրվել էր որոշակի ժամկետ այդ սովորությանին նորմին համապատասխանելու համար: Դատարանի պատասխանն այն է, որ նույնիսկ եթե այս գործի հանգամանքներն առաջացել են մինչև Եվրոպայի Խորհրդին անդամակցելու ժամանակ այլընտրանքային ծառայության մասին համապատասխան ներպետական օրենսդրության ընդունման համար Հայաստանին տրված անցումային ժամանակահատվածը և դրա ընթացքում, համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվողների կրոնի ազատությունը հարգելու պարտավորությունը կիրառվում է այն պահից, երբ այդ իրավունքն ինքնին սահմանվել է միջազգային իրավունքի համակարգի մեջ և պետությունը վավերացրել է Կոնվենցիան: Սա հետաքրքիր լույսի



ներքո է ներկայացնում Եվրոպայի Խորհրդի և հետագայում անդամ պետությունների կողմից կազմակերպությանն անդամակցելու համար վավերապայմանների քննարկումների քաղաքական ընթացակարգի դերը: *Bayatyan*-ի վճռով ո՛չ Մեծ Պալատը, և ո՛չ էլ Պալատը չեն տվել այս խնդրին պարզ լուծում: Փոխարենը, Դատարանը դիտարկել է Հայաստանի և Եվրոպայի Խորհրդի երկխոսությունը որպես դիմումատուների իրավունքների և հասարակական շահերի համադրության իրականացման փաստարկներից մեկը:

3. Ըստ ինձ՝ Դատարանն անցյալում ընդունել էր ավելի պարզ դիրքորոշում հնարավոր հակասող պարտավորությունների խնդրի առնչությամբ: Օրինակ, *Slivenko v. Latvia* գործով այն նշել է, որ.

«1997թ.-ի հունիսի 27-ին վավերացնելով Կոնվենցիան և Թիվ 1, 4, 6 և 7 Արձանագրությունները [Լատվիան] ստանձնել է պարտավորություն այդ օրվանից ի վեր «ապահովել» իր իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուրի իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանվել են Կոնվենցիայում և նշված Արձանագրություններում (Կոնվենցիայի 1-ին հոդված) և, որոնք հանդիսանում են Կոնվենցիայի 57-րդ հոդվածի 1-ին մասով գործող իրավունքների պահպանման առարկա: ... 1-ին հոդվածի հետ համադրությամբ՝ Կոնվենցիայի 57-րդ հոդվածի 1-ին մասի շարադրանքից բխում է, որ պետության կողմից Կոնվենցիայի վավերացումը ենթադրում է, որ այսուհետ տվյալ պետության տարածքում գործող ցանկացած օրենք պետք է համապատասխանի Կոնվենցիայի դրույթներին: Անհնարինության պարագայում, պետությունն ունի հնարավորություն կատարել վերապահում Կոնվենցիայի (կամ դրան կից Արձանագրությունների) այն դրույթների նկատմամբ, որոնց կատարումն այն չի կարող ամբողջովին ապահովել վիճարկվող օրենքի շարունակական գոյության պատճառով (տե՛ս *Slivenko v. Latvia* (որոշում) [GC], գանգատ թիվ 48321/99, պարբ. 58 և 60, ECHR 2002-II (քաղվ.))»:

4. Վերջապես, այս և այլ գործերով, ես գտնում եմ, որ Դատարանը սահմանել է բավականին բարդ թեսթ՝ համոզմունքի կամ հավատքի առնչությամբ, որն ունի բավարար չափով հիմնավորվածություն, համոզականություն, լրջություն, միասնականություն և կարևորություն՝ 9-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների ներգրավման համար: Ինձ համար

պարզ չէ, թե ինչպես Դատարանը կգնահատի, որ առկա է բավարար համոզականություն, լրջություն և միասնականություն: Սույն գործով դիմումատուն անդամակցել էր «Եհովայի վկա» կրոնական կազմակերպությանը միևնույն տարի, երբ նա գրանցվել էր որպես զինվորական ծառայությանը պիտանի անձ: Ցանկացած դեպքում, Դատարանը չքննեց դիմումատուի հավատքի բավարար համոզիչ լինելը: Դատարանը եզրահանգեց, որ.

«դիմումատուն նմանապես հանդիսանում էր «Եհովայի վկա» կրոնական կազմակերպության անդամ, ով չէր ցանկանում անցնել զինվորական ծառայություն, ոչ թե անձնական շահերից կամ հարմարավետությունից ելնելով, այլ հիմնվելով միայն իր կողմից անկեղծորեն դավանվող կրոնական համոզմունքների վրա, իսկ կիրառված քրեական պատժամիջոցները նման հնարավորության բացակայության հետևանքն էին» (տե՛ս, պարբ. 44): Ինձ թվում է, որ Եվրոպական Դատարանը գործում է հիմնվելով այն ենթադրության վրա, որ դիմումատուն իսկապես դավանում է համոզմունքներ, քանզի նա անցել է բոլոր ներպետական ատյաններով և, Կառավարության կողմից հակառակ պնդումների բացակայության դեպքում, Դատարանը պետք է անդպիսի ենթադրության գար: Ես կարող եմ միանշանակ համաձայնվել, որ Կառավարությունը հակառակը պնդող որևէ ապացույց կամ համապատասխան բացատրություն չի ներկայացրել: Ըստ ինձ, այդ թեսթի և հետագա գործերում դրա կիրառելիության առնչությամբ դեռևս առկա է լուծում չստացած խնդիր: